1856ին՝ զարհուրելի փոթորիկ մը եղնելով՝ Սեւ ու Մարմարա ծովերուն մէջ կորան 726 նաւեր։

Նոյն տարին սոսկալի և արկածաւոր հրդեհ մը պատահելով 'ի Սելանիկ՝ 700 հոգի մեռան և 2000 հոգի վիրաւորեցան։

1856ին Հռոդոսի ու Կրետէի մէջ՝ երկրաշարժը կործանեց փլուց շատ մեծ չէնքեր, 44 գիւղ, Քանտիա քաղաքը, պատճառելով ահագին վնաս։ Նոյնպէս Սանդուրին կղզին, որ ծածկուեցաւ ծովուն տակ։

1859ին՝ դարձեալ մեծ հրդեհ 'ի Սամսոն։ Եւ այս աղիտաբեր հրդեհներուն վրայ 1869ին տեղի ունեցաւ Բերայի մեծ հրդեհը, ուր այրեցան 8000ի չափ չէնք և կորան շատ մարդիկ։

Եւ գաւառներու մէջ ալ ծանօթ անծանօթ շատ հրդեհներ մեծապէս վնասած են դրամագլուխներու և տուրևառի գործառնութեանց, 'ի մէջ որոց Վանի շուկային (1877) և ուրիշ առևտրական քաղաքներու հրդեհներն Անատոլուի և Ռումէլիի մէջ, չհաշուելով ճամբաներու դժուարութիւններն և այլն։

Ասո՛նք դուրսէն։